# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ Արաքսավան, (093)935335, araksavonhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 19

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳ.

1.Արաքսավան համայնքի ղեկավարի 2016 թվականի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին:

2.Համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների մասին:

3.Համայնքի սեփականություն հանդիսացող միջոցների 2015 թվականի գույքագրման մասին:

4.Համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՌՈՄԱՆՈՎ ԳՐԻԳՈՐ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
3. ՓՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ
4. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 20

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի դրույթներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել Արաքսավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՍԱՆՈՎ ԳՐԻԳՈՐ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
3. ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ
4. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

**02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 21**

### ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել Արաքսավան համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՋԱՆՈՎ ԳՐԻԳՈՐ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
3. ՓՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ
4. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 22

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող միջոցների 2015 թվականի գույքագրման արդյունքների վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտը համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԻՈԱՆՈՎ ԳՐԻԳՈՐ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
3. ՓՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ
4. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 23

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և ելնելով անհրաժեշտությունից

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի 2015 թվականի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ գործառական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածից պակասեցնել 310000 /երեք հարյուր տասը հազար/ դրամ և հատկացնել նույն գործառական դասակարգման 4112 /պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/ հոդվածին:

2. 11.01.02.51 /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ գործառական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ և հատկացնել 10.07.01.54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ գործառական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին 200000 /երկու հարյուր հազար/ դրամ և 04.05.01.59 /փողոցների պահպանում և շահագործում/ գործառական դասակարգման 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածին 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԻՈՆԱՅՈՎ ԳՐԻԳՈՐ
2. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
3. ՊՈՂՈՏՍԱՆՅԱՆ ԱՐԱ
4. ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 02.12.2015 թ. թիվ 20 որոշման

# 2016թ. ԱՐԱՔՍԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ / |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 180 000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 122 000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 120 000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 114 000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Հարկահավաք | 1 | 100 000 |
| Օպերատոր | 1 | 100 000 |
| Խմելու ջրի պոմպակայանի հսկիչ | 1 | 72 800 |
| Հավաքարար | 1 | 72 800 |
| Վարորդ | 1 | 77 950 |
| Աղբատար մեքենայի վարորդ /պայմանագրային/ | 1 | 72 800 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 9 | 1032350 |

Համայնքի ղեկավար Ա. Թադևոսյան

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 02.12.2015 թվականի թիվ 21 որոշման

# Արաքսավան համայնքի 2016թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ.
բ/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտի համար՝
բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- - 15000 դրամ.
բբ/501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար---- 25000 դրամ.
բգ/1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար--- 25000 դրամ.
բդ/3001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար------- 50000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ------------- 1500 դրամ.
դ/ 20 քմ և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ---------- 2500 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝-------------------------------------------------------------------------------------------1500 դրամ.
բ/բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է-------------------------------------------------------------------------------------------------2500 դրամ.

1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ---------------------------------------------------------- 1500 դրամ.

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ---------------------------------------------------------- 1500 դրամ.

5.Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրական----------150դրամ.

բ/հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է-------- 150000 դրամ.

գ/խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝--------30000 դրամ.
գա/ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում---------------------------------------------------------------2000 դրամ.
Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում-----------------------------------------------------------1000 դրամ.

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/առևտրի օբյեկտների համար------------------------------------------------50 000դրամ.

բ/հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար-------------------------50 000դրամ.

գ/ Բաղնիքի/սաունաների/ համար -------------------------------------------300 000դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար ---------------------------------1 000 000 դրամ.

ե/շահումով խաղերի կազմակերպման համար--------------------------------- 500 000դրամ.

գ/վիճակախաղերի կազմակերպման համար-------------------------------------------150 000դրամ.

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ –ի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար------------------------------------------------2 000դրամ.

բ/թունդ ալկահոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝------------------------ 3 500դրամ.

գ/այլ արտաքին գովազդի համար՝ ---------------------------------------------1 000դրամ.

ե/դատարկ գովազդային վահանակների համար՝ --------------------------------700դրամ.

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------------1 000դրամ.

9.Համայնքի տարածքում /բացառությամբ քաղաքային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայությունիրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------------3 000դրամ

Համայնքի տարածքում տեղական վճարներ սահմանել՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ------------------------------------------ 1000 դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել ------------------ 2000 դրամ:

3.Շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ քաղաքապետարանի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար --------------------------------------------- 5 000 դրամ:

4. Աղբահանության դիմաց յուրաքանչյուր բնակչից ամսական 10 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ